

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/6

1 նոյեմբերի 2016թ.

Քննարկվեց «Ալմաստպրոֆ» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ կողմից կիրառված տուգանքը վերանայելու վերաբերյալ:

«Ալմաստպրոֆ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Համաձայն 30.09.2016թ. թիվ 06/3-1/29572-16 գրության և «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1 հոդվածի ներկայացվում է դիմում-գանգատ, քանի որ ընկերության կողմից ներկայացված ամսական ԱԱՀ-ի հաշվարկներով և առաջացած պարտավորությունների մարումով բյուջեի նկատմամբ ոչ մի ֆինանսական խախտում չի առաջացել: Սակայն ընկերության նկատմամբ կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի դրույթները:

Միաժամանակ հայտնվում է, որ ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից նմանատիպ հարցի վերաբերյալ ընդունվել է համապատասխան որոշում: Մասնավորապես, գանգատարկման հանձնաժողովի 20.01.2015թ. թիվ 2/9 որոշմամբ բավարարվել է «Ավո-ՖՄՀ» ՍՊԸ 27.12.2014թ.-ի դիմում գանգատը:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է քննարկել ընկերության կողմից ներկայացված դիմում-գանգատը և այն բավարարել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Ալմաստպրոֆ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ ընկերություն) կողմից 2016թ.-ի փետրվարից մինչև հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում Նոր Նորքի ՀՏ է ներկայացվել ամսական ԱԱՀ-ի հաշվարկներ: Սակայն համաձայն ընկերության կողմից պետք է ներկայացվեին ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ: Արդյունքում, Նոր Նորքի ՀՏ կողմից կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ գումարով 507.063 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, քննարկվող հարցի վերաբերյալ Հանձնաժողովն իր դիրքորոշումը բազմիցս արտահայտել է նմանատիպ գործերով կայացված այլ որոշումներով:

Այսպես, Հանձնաժողովն արձանագրում է, որ ընկերության կողմից ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ ներկայացնելու փոխարեն ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացվելու պայմաններում պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի գումարների չափը չի փոփոխվել, այսինքն՝ դրա հետևանքով պետական բյուջե պակաս ԱԱՀ-ի գումար չի վճարվել: Ընդհակառակը, ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ

ներկայացվելու արդյունքում ընկերության կողմից ԱԱՀ-ի գծով պարտավորությունները կատարվել են սահմանված ժամկետից շուտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկի հաշվարկներն ընկերության կողմից ամսական կտրվածքով ներկայացվել են թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը եզրակացնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

«Ալմաստպրոֆ» ՍՊԸ գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ